ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«28» Մարտի 2019 թ. Թիվ 5

ՍԼԱԴԻԿ ՕՆԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով սեփականատերեր Սլադիկ Օնիկի Հովակիմյանի և Ալվարդ Եղիայի Հովակիմյանի 2019 թվականի դիմումները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Օրինականացնել Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքում Սլադիկ Օնիկի Հովակիմյանին և Ալվարդ Եղիայի Հովակիմյանի սեփականության իրավունքով պատկանող 04-067-0218-0010 կադաստրային համարով 0.2718 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տնից ինքնակամ կառուցված արտաքին մակերեսով 30.3 ք/մ, օժանդակ շինություններից արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված 33.6 առակուսի մետրը համաձայն՝ «Սերյոժա Սարգսյան,, Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը բնակելի տան 1 քառակուսի մետրի համար՝ 1300 դրամ, իսկ օժանդակ շինությունների համար՝ 780 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 65598 (վաթսունհինգ հազար հինգը հարյուր իննսունութ) ՀՀ դրամ:

3. Հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, գյուղ Մրգաշատ, 2-րդ փողոց 61 տուն:

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում պետք է վճարվի Մրգաշատ համայնքի վարչական եկամուտների 900335217114 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ*